ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IN-HOME SUPPORTIVE SERVICES) ԾՐԱԳԻՐ
ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԽՆԴՐԱՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՆԱՄԱԿ ՍՏԱՑՈՂԻՆ՝ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՎԱ ԵՎ/ԿԱՄ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ԵՐՐՈՐԴ ԽԱԽՏՈՒՄԸ (ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ 90 ՕՐՈՎ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ADDRESSEE)

ՎԱՐՉԱՇՐՋԱՆ՝ _____

Ծանուցման ամսաթիվը՝ _____
Մատակարարողի անունը՝ _____
IHSS գրասենյակի հասցեն՝ _____
_____
IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ _____

Ում՝ Տնային աջակցության ծառայությունների (IHSS) ստացողին

Այս ծանուցմամբ տեղեկացնում ենք ձեզ, որ մենք ուսումնասիրել ենք Նահանգային վարչական վերանայման խնդրանքը, որը ձեր մատակարարողը՝ _____ներկայացրել էր _____ ամսին երրորդ խախտում ստանալուց հետո, և այս ծանուցման ամսաթվի դրությամբ՝ խախտումը հաստատված է: Այս որոշումը հիմնված է ձեր մատակարարողի կողմից ներկայացված Նահանգային վարչական վերանայման խնդրանքի մեր ուսումնասիրության վրա: Բավարար փաստեր չկան՝ ցույց տալու համար, որ նա համապատասխանում է չափանիշներին, որոնք պահանջում են աշխատել ավելի շատ ժամեր, քան թույլ է տալիս նրա աշխատանքային շաբաթվա պայմանագիրը: **Ձեր մատակարարողը կշարունակի երրորդ խախտում ունենալ, քանի որ նա՝**

☐ Աշխատել է 40 ժամից ավել աշխատանքային շաբաթում ստացողի համար՝ առանց վարչաշրջանի հավանության, երբ այդ ստացողի առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 40 ժամ կամ ավելի քիչ:

☐ Աշխատել է ստացողի առավելագույն շաբաթական ժամերից ավել՝ առանց վարչաշրջանի հավանության, և դրա հետևանքով ձեր մատակարարողն ավելի շատ արտաժամյա աշխատանք է կատարել ամսվա ընթացքում, քան նա սովորաբար կաներ:

☐ Աշխատել է ավելի քան 66 ժամ մեկ աշխատանքային շաբաթում, երբ ձեր մատակարարողն աշխատում է մեկից ավել ստացողների համար:

☐ Հայցել է 7 ժամը գերազանցող ճամփորդության ժամանակ մեկ աշխատանքային շաբաթում:

Այս ծանուցման ամսաթվից 20 օրացուցային օր անց 90 օրով կդադարեցվի IHSS ծառայություններ մատուցելու ձեր մատակարարողի իրավասությունը:

Եթե դուք աջակցության կարիք ունեք նոր մատակարարող գտնելու հարցում, մինչև ձեր մշտական մատակարարողն իրավասու դառնա կրկին ծառայություններ տրամադրել, խնդրում ենք կապվել ձեր վարչաշրջանի IHSS գրասենյակի հետ:

Եթե դուք վստահ չեք, թե որ օրը ձեր մատակարարողն իրավասու կլինի դառնալու IHSS մատակարարող, կամ եթե հարցեր ունեք այս ծանուցման վերաբերյալ, խնդրում ենք կապվել ձեր վարչաշրջանի IHSS գրասենյակի հետ: